



Յայտարարութիւն

Յայկական աւանդական երեք կուսակցութիւններու տեղական ղեկավար մարմիններու կազմակերպութեամբ, Ուրբաթ, Սեպտ. 4-ի երեկոյեան Թորոնթոյի Յայ Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ համագաղութային հաւաք մը, որուն մասնակիցներուն կողմէ որդեգրուեցաւ բողոքի հաւաքական ներկայ յայտարարութիւնը

Յ.Յ.Ռաշնակցութեան «Սոլոմոն Թէհիլիրեան» կոմիտեի, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Գանատայի Ծրչանային Վարչութեան եւ Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան Գանատայի Ծրչանային Վարչութեան կողմէ կազմակերպուած եւ Թորոնթոյի Յայ Կեդրոնին մէջ կայացած ժողովրդային հաւաքի ներկաներս, կու գանք մեր բողոքը արտայատելու Յայաստանի եւ Թուրքիոյ պատկան իշխանութիւններուն կողմէ Օգոստոս 31-ին հրապարակուած երկու երկիրներու դիւնագիտական երկկողմանի յարաբերութիւններու բնականոնացման ուղղուած առաջադրանքներու նախագիծի բովանդակութեան հանդէա:

Վերոնշեալ փաստաթուղթերուն մէջ տեղ գտած արձանագրութիւնները, իրենց ամբողջական պարունակին մէջ ուրիշ բան չեն, եթէ ոչ համայն հայութեան վրայ պարտադրուող նախապայմաններու շարան մը, ուր միակ տուժողը կը հանդիսանայ հայկական կողմը:

Նախագիծի արձանագրութեանց մէջ յստակ եւ նպատակաուղղուած ճիգ կայ հայ ժողովուրդի պատմական իրաւունքներու հետապնդման երթը հարուածելու եւ հայութիւնը բեւեռացումի մղելով պառակտելու:

Արձանագրութեանց հիմնական պայմաններու հայկական կողմի վաւերացումով,

Ա.- Յայութիւնը կը կորսնցէ իր բռնագրաւուած պատմական տարածքը վերականգնելու առիթը,

Բ.- Յայկական Յեղասպանութեան ճանաչման գծով քաղաքական գետնի վրայ, տարիներու ընթացքին իրագործուած ձեռքբերումները անդառնալի հարուած կը ստանան ու կը նսեմանան,

Գ.- Արցախեան հիմնահարցի ծիրէն ներս, բանակցային դիւանագիտական մրցավազքին մեջ, կը յայտնուինք յաւելեալ զիշումներ կատարելու պարտադրանքին դիմաց:

Յայ ժողովուրդի դարաւոր արդար դատին հակադրուող անձնատուողական այս նախագիծը վտանգաւոր հետեւանքներով լի է: Յայ ժողովուրդի ապագայ գոյատեւման եւ Յայաստանի ազգային անվտանգութեան ուղղուած հարուած է:

Ժողովրդային այս հաւաքին մասնակիցներս, կոչ կ'ուղղենք Յայաստանի ներկայ վարչակազմին, որ չենթարկուին իրենց վրայ պարտադրուող տարաբնոյթ միջազգային ճնշամիջոցներուն, եւ զգաստանալով Ետ կենան նման նախագիծ մը յառաջ մղելու ու անոր տրամադրութիւններուն անձնատուր ըլլալու քայլեն: